ՔՐԵԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԲԱԺԻՆ

Ն Յ Ո Ւ Թ Ա Կ Ա Ն Ի Ր Ա Վ Ո Ւ Ն Ք

Բ-ն 2016 թվականից տանը ապօրինի պահել է ակոսափող հրազեն, որը հայտնաբերվել է 2021 թվականին: 2018 թվականին նշված արարքի համար նախատեսված հոդվածի սանկցիան մեղմացել է: 2020 թվականին սահմանվել է մինչև 2018 թվականը գործող սանկցիայից ավելի խիստ պատիժ:

Բ-ի նկատմամբ պետք է կիրառվի.

- 2016 թվականի դրությամբ գործող օրենքը:
- Դատավճիռ կայացնելու պահին գործող օրենքը:
- Առավել մեղմ պատիժ սահմանող օրենքը:
- Հանցանքն ավարտելու պահին գործող օրենքը:

Դ Ա Տ Ա Վ Ա Ր Ա Կ Ա Ն Ի Ր Ա Վ Ո Ւ Ն Ք

Ո՞վ իրավունք ունի առաջինը հարցեր տալու վկային, եթե նա հրավիրվել է դատարանի նախաձեռնությամբ.

- Մեղադրանքի կողմում հանդես եկող անձինք:
- Դատարանը
- Պաշտպանության կողմում հանդես եկող անձինք:
- Դատարանի թույլտվությամբ ցանկացած կողմ: